ՄԵ՛ՆՔ ԵՆՔ
ՄԵՐ ՍԱՐԵՐԸ

Զարգացման
գործակալություն

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՄԵՆՔ ԵՆՔ ՄԵՐ ՍԱՐԵՐԸ» զարգացման գործակալության գործունեությունը

Հունվար – Հունիս
2024

ՄԵ՛ՆՔ ԵՆՔ
ՄԵՐ ՍԱՐԵՐԸ
Զարգացման
գործակալություն



«Մենք ենք մեր սարերը» տարածքային զարգացման գործակալությունը հիմնադրվել է 2022 թվականի վերջին Ռուբեն Վարդանյանի և գործընկերների կողմից՝ պետական և տեղական կառույցների, հասարակական և մասնավոր հաստատությունների և կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ Արցախի և Սյունիքի զարգացման ու աջակցության նախագծեր (ծրագրեր) իրականացնելու նպատակով: Կազմակերպությունը 2022 և 2023 թվականների ընթացքում Արցախում, շրջափակման պայմաններում, իրականացրել է ավելի քան 2 մլն դոլարի նախագծեր (ծրագրեր), որի մասին հաշվետվությունը հասանելի է այս հղումով:

Չնայած նրան, որ կազմակերպության հիմնադիր Ռուբեն Վարդանյանը ապօրինի ձերբակալվել է 2023 թվականի սեպտեմբերի 27-ին և մինչ օրս գտնվում է ադրբեջանական գերության մեջ, հավատարիմ մնալով իր մարդասիրական սկզբունքներին, նա պնդել է շարունակել կազմակերպության բարեգործական գործունեությունը Արցախի ժողովրդին աջակցելու համար: 2023 թվականի հոկտեմբերից «Մենք ենք մեր սարերը» շարունակում է օգնել Արցախից բռնի տեղահանված ընտանիքներին վերականգնվել ծանր փորձությունից հետո և արժանապատվորեն հարմարվել նոր իրողություններին՝ նպաստելով նրանց սոցիալական զարգացմանը և ապահովելով տնտեսական կայունություն: Բացի այդ, կազմակերպությունը ձգտում է հնարավորություն տալ մարդկանց իրացնել իրենց ներուժը Հայաստանում:

2024 թվականի մարտին կազմակերպությունն անվանափոխվել է «Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալության (այսուհետ՝ Գործակալություն):

ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԵՐ ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽՑԻ ՎԱՐՊԵՏՆԵՐԻՆ

Արցախից բռնի տեղահանված և Հայաստանում բնակություն հաստատած մեր հայրենակիցներից շատերը սերնդեսերունդ փոխանցված արհեստներով ինքնազբաղ տնտեսություն են վարել Արցախում: «Աջակցություն արցախցի վարպետներին» նախագծի նպատակն է՝ օգնել Արցախից բռնի տեղահանված արհեստավորներին հնարավորինս շուտ վերսկսել աշխատանքը Հայաստանում և բարելավել իրենց ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակը: Նշված նպատակով նախագծի շրջանակներում կազմակերպվել են մասնագիտական վերապատրաստման (վերաորակավորման) դասընթացներ, ինչպես նաև տրամադրվել են աշխատանքի վերսկսման համար անհրաժեշտ գործիքներ և սարքավորումներ՝ յուրաքանչյուր վարպետին 1,300 ԱՄՆ դոլար արժեքի սահմաններում:

Նախագծի շրջանակներում աջակցություն են ստացել 87 արհեստավորներ (դերձակներ, ոսկերիչներ, կոշկակարներ, զոդողներ, խեցեգործներ, փայտագործներ, դարբիններ, քարագործներ, հրուշակագործներ, կահույքագործներ, վերանորոգողներ, վարսահարդարներ և այլն): Շահառուներից 28-ը մասնակցել են նաև վերապատրաստման դասընթացներին:

Նախագիծը լավ հնարավորություն էր որոշ շահառուների համար ճանաչելու միմյանց և միավորվելու իրենց գործունեության մեջ:

Հաշվետու ժամանակահատվածում նախագծի բյուջեն կազմել է շուրջ 88 800 դոլար: Հաշվի առնելով նախագծի շոշափելի ազդեցությունը և արդյունավետությունը՝ ինչպես նաև տեղահանված արցախցիների շրջանում մեծ պահանջարկը, նախատեսվում է շարունակել և ընդլայնել այն երկրորդ կիսամյակում:

ՄԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ

2023 թվականի սեպտեմբերին Արցախից բռնի տեղահանվելու ընթացքում 54-ամյա **Վրեժ Բաղդասարյանի գերխնդիրը եղել է ընտանիքը ողջ և առողջ Հայաստան հասցնելը**:

Նա, որ եղել է զինվորական, կենսաթոշակային տարիքի անցնելուց հետո հավաքել է վարպետներին և Ստեփանակերտում բացել արտադրամաս, որտեղ հիմնականում զոդման աշխատանքներ էին կատարում:

Բռնի տեղահանման պատճառով Վրեժը Ստեփանակերտում է թողել ոչ միայն տունը և տարիների ընթացքում դժվարությամբ ստեղծածը, այլև իր ընտանիքի հիմնական ապրուստի միջոց հանդիսացող աշխատանքային գործիքներն ու սարքավորումները:

Հանգրվանելով Հայաստանում և առերեսվելով նորանոր մարտահրավերների, Վրեժը որոշել է, որ պետք է ուժ գտնի և կրկին զրոյից սկսի իր գործը: Հավաքել է Հայաստանի տարբեր քաղաքներում գտնվող իր թիմի անդամներին և սկսել բառացիորեն ձեռքով կռել երկաթը՝ համապատասխան սարքավորումների ու գործիքների բացակայության պատճառով:

Վրեժը և նրա գործընկերները նույնպես դարձել են «Աջակցություն արցախցի վարպետներին» նախագծի շահառու, և ստացել են դարբնոցային գործիքներ: ***«Մեկ գործիքը մեկ աշխատատեղ է»***, - ասում է Վրեժը:

Այժմ Վրեժն ու իր թիմը մտածում են դարբնոցն ընդլայնելու և ավելի մեծ պատվերներ վերցնելու ուղղությամբ: Նշում է, որ պատվերների խնդիր չունեն, հիմնական խնդիրը գործիքների բացակայությունն էր:



ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄԵՐ

Լիանայի պատրաստած փախլավայի համը քաջ հայտնի է ոչ միայն գուրմաններին, այլև նրանց, ովքեր ուշադիր հաշվում են հրուշակեղենի կալորիաներն ու հետևում իրենց կազմվածքին: Նրա շնորհիվ մեղրով ու ընկույզով պատրաստվող արցախյան անուշաբույր խմորեղենի համբավը տարածվել է հայրենի Արցախից դուրս՝ Ռուսաստանից մինչև Չինաստան, Բուլղարիայից մինչև Մոնղոլիա:

2023թ. սեպտեմբերին Արցախից բռնի տեղահանվելուց հետո Լիանան տեղափոխվել է Էջմիածին:

«Աջակցություն արցախցի վարպետներին» նախագծի շրջանակներում Լիանային է տրամադրվել էլեկտրական վառարան և սառնարան-ցուցափեղկ, ինչի շնորհիվ նա կարողացավ այստեղ վերսկսել իր գործը, հրուշակեղենի փոքրիկ արտադրամաս բացելով: Փախլավայի արցախյան համը պահպանելը Լիանայի համար կարևոր սկզբունք է, քանի որ հավատում է՝ **մի օր անպայման վերադառնալու է Արցախ:**

2 «ԹԵՎԵՐ» ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Թևեր ստանալու ամենահեշտ միջոցը դրանք ուրիշին պարգևելն է:»

2023-ին Դիլիջանում իրականացված «Թևեր» վերականգնողական ծրագրի պիլոտային փուլի հաջողությունը խրախուսեց Գործակալությանը 2024 թվականին շարունակել Արցախից բռնի տեղահանված 4-18 տարեկան երեխաների հոգեբանական վերականգնմանն ուղղված այս ծրագիրը:

2024 թ. ապրիլ-հունիս ամիսներին Դիլիջանում բնակվող 76 երեխա և 41 ծնող մասնակցել են նշված ծրագրին, որի նպատակն էր վերականգնել երեխաների ֆիզիկական, հոգեբանական և մենթալ ռեսուրսները, ինչպես նաև նպաստել իրենց ծնողների հոգեբանական բարեկեցությանը:

Բացի ծրագրի հիմնական բաղադրիչներից (արտ-թերապիա, սպորտ, կայունության և առաջնորդության հմտությունների զարգացում), դրանց ավելացվել են նաև սոցիալական ներառականության տարրեր, ինչպիսիք են համայնքային միջոցառումները տեղի բնակչության մասնակցությամբ, ճանաչողական էքսկուրսիաներ իրենց նոր բնակավայրում, էքսկուրսիաներ դեպի Երևան, արշավներ և այլն:

Դիլիջանում ծրագրի իրականացման գործընկերներ էին.

- Դիլիջանի համայնքային կենտրոնը,
- «Climate Uturn» կրթական հարթակը:

Հիմնվելով հոգեբանա-ախտորոշիչ գնահատականների և ծնողների արտահայտած խնդիրների վրա՝ ակնհայտ էր, որ նախքան ծրագրին մասնակցելը երեխաները հիմնականում բախվում էին այնպիսի խնդիրների, ինչպիսիք են՝ անքնությունը, անհանգստությունը, վախը, անորոշությունը, անվստահությունը, հուսահատությունը, գերլարումը, հուզական անկայունությունը:

«Թևեր» ծրագրի համապարփակ միջոցառումները և նպատակադրված ջանքերը ծրագրի ավարտին ցույց տվեցին մասնակից երեխաների շրջանում այս խնդիրների զգալի բարելավում: Դիտարկումները, որոնք իրականացվել են ծրագրի մասնակից երեխաների մոտ մինչև թերապիան սկսելը և դրանից հետո, մի շարք չափանիշների գծով ցույց են տվել նկատելի առաջընթաց երեխաների մեծամասնության մոտ՝ արտացոլելով հոգեբանական բարեկեցության դրական տեղաշարժ դեպի ճկունություն, կայունություն և ապագայի հույս (Գծագիր):



Միաժամանակ որոշվեց շարունակել աշխատանքը տրավմատիկ փորձը դեռևս ամբողջությամբ չհաղթահարած մասնակիցների հետ, ովքեր լիակատար ապաքինման համար կարիք ունեն մասնագետների աջակցության:

Ծրագրի նախորդ փուլի իրականացման ժամանակ քաղված ամենակարևոր դասը ընտանիքի միաժամանակյա ներգրավվածության կենսական անհրաժեշտությունն էր՝ կայուն արդյունքների հասնելու համար: Ծնողների և ընտանիքի այլ անդամների վերաբերմունքն ու պահվածքը էական ազդեցություն ունեն երեխաների վերաբերմունքի, վարքի և արժեքների վրա: Հետևաբար, ծրագրի մեկ այլ կարևոր բաղադրիչ դարձավ ընտանիքների հոգեբանական ապաքինումը անհատական և խմբակային թերապիայի միջոցով: Թերապիայի կուրսն ավարտած ծնողների 70%-ը կայունացրել է իր հոգեբանական վիճակը, մնացածը ցանկություն է հայտնել հաջորդ փուլում շարունակել աշխատանքը մասնագետների հետ:

Ծրագրի ավարտից հետո անցկացված հարցումը, որին մասնակցել է ծնողների 70%-ը, ցույց է տվել, որ հարցմանը մասնակցածների 100%-ը միակարծիք է, որ ծրագիրը օգնել է երեխաներին վերականգնել հոգեբանական ռեսուրսները, արդարացրել է իրենց հույսերը և լիովին բավարարել իրենց ակնկալիքները:

Նաև, ինչպես ցույց են տվել ծնողների և երեխաների հետ հարցումները, սոցիալական ինտեգրման և նոր բնակավայրի հետ ծանոթության բաղադրիչը, որն անցկացվում էր ուսումնական էքսկուրսիաների, տեղի բնակչության մասնակցությամբ միջոցառումների և արշավների ձևաչափով, ամենասիրվածն էր և պահանջվածը մասնակիցների շրջանում:

Դոնորների աջակցության շնորհիվ Գործակալությունը ոչ միայն շարունակում է ծրագիրը Դիլիջանում, այլև ընդլայնում է ծրագրի աշխարհագրությունը. հուլիսին Գյումրիում մեկնարկում է «Թևեր»-ը շուրջ 40 երեխաների և նրանց ծնողների համար:

«Թևեր» ծրագրի վերջնական նպատակը դուրս է գալիս մասնակիցների վրա անմիջական ազդեցությունից: Կանխելով տրավմայի փոխանցումը ապագա սերունդներին՝ ծրագիրը նպատակ ունի ստեղծելու ապաքինման և ճկունության ալիքային ազդեցություն:

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի բյուջեն կազմել է շուրջ 32 600 դոլար:

ՄԵՐ ԱՐԱԴՈՒԹՅՈՒՆԸ

«Մեր երեխաները դարձան ավելի ինքնավստահ, նախաձեռնող և ինտեգրվեցին սոցիալական նոր միջավայրին: Մեծ էր նաև ծնողների հետ տարված աշխատանքը, ինչը շատ կարևոր էր ծրագրի լիարժեք արդյունավետության տեսանկյունից»:

«Թևեր» ծրագրի շահառու հանդիսացող
երեխայի ծնող

«Մենք՝ ամեն ինչով անցած երեխաներս սովորեցինք, որ դժվարության հանդիպելիս երբեք պետք չէ հուսահատվել: Նորից մեզ երեխա զգացինք, նորից սկսեցինք ժպտալ»:

«Թևեր» ծրագրի ***11-ամյա մասնակից***

««Թևեր» ծրագրի շնորհիվ հնարավոր եղավ ավելի խորքային պատկերացում կազմել Արցախից բռնի տեղահանված բնակչության խնդիրների վերաբերյալ և մշակել կարիքահեն ծրագիր: Ծրագրի կարևոր բաղադրիչներից մեկը՝ Արցախից բռնի տեղահանված անձանց ինտեգրումն է համայնքային կյանքին»:

Դիլիջանի համայնքային կենտրոնի տնօրեն
Արմինե Հովհաննիսյան

«LEADERS-2-LEADERS» ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

«LEADERS-2-LEADERS»-ը շարունակական զարգացման տրանսֆորմացիոն ծրագիր է, որն իրականացվում է Առաջնորդության ու մասնագիտական զարգացման «Մատենա» միջազգային դպրոցի արցախցի շրջանավարտների համար և կառուցված է «հավասարը՝ հավասարին» սկզբունքով: Ծրագրի իրականացումը հնարավոր է դարձել «Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալության, Առաջնորդության ու մասնագիտական զարգացման «Մատենա» միջազգային դպրոցի փորձագետների և շրջանավարտների, Հայաստանի քոուչինգի միջազգային ֆեդերացիայի, ինչպես նաև աշխարհահռչակ կրթական հաստատությունների՝ Հարվարդի և Օքսֆորդի շրջանավարտների համատեղ ջանքերով:

Ծրագրի նպատակն է՝ խթանել խորացված ուսուցման և վերապատրաստման համապարփակ գործընթացները, բարձրացնել ծրագրի մասնակիցների մրցունակությունը աշխատաշուկայում, աջակցել նրանց ձեռնարկատիրական նախաձեռնությունների զարգացմանը և, որ ամենակարևորն է, ստեղծել համախոհ առաջնորդների վստահելի ցանց:

Ծրագրի առաջին մոդուլը տեղի ունեցավ 2023 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին՝ 25 մասնակիցների համար: 2024 թվականին ծրագիրը շարունակվեց, և ծրագրի երկու նոր մոդուլներին՝ «Ապագայի կառուցում և նպատակների սահմանում» և «Աշխատանքի տեղավորման ու զբաղվածության խթանում» մասնակցեց արդեն 30 հոգի:

Միջանկյալ արդյունքները ցույց տվեցին, որ մասնակիցների մոտ 50%-ն արդեն կարողացել է աշխատանք գտնել, որից մոտ 10%-ը՝ իրենց մասնագիտությամբ, չնայած որ շահառուին աշխատանքով ապահովելը չի եղել ծրագրի հիմնական նպատակներում: Մասնակիցներն ընդգծել են նաև երկու նոր ոլորտներ, որոնցով հետաքրքրված են՝ որպես աշխատաշուկայում պահանջված մասնագիտություններ, դրանք են՝ նախագծերի կառավարում և սոցիալական ցանցային մարքեթինգ: Ծրագրի հաջորդ մոդուլի շրջանակներում նախատեսվում է կազմակերպել ուսուցում նաև այս ուղղություններով:

Ծրագրի բյուջեն առաջին կիսամյակի կտրվածքով կազմել է մոտ 22 900 ԱՄՆ դոլար, որն ապահովվել է դասընթացավարների՝ բացարձակապես անհատույց մատուցված ծառայությունների միջոցով:

Արցախցի Լորետա Խաչատրյանը՝ «LEADERS-2-LEADERS» ծրագրին իր մասնակցության մասին.

Դեռևս Արցախում, ադրբեջանական շրջափակման պայմաններում, մեզ հնարավորություն տրվեց առցանց մասնակցելու Մատենա դպրոցի ծրագրին: Մեզ համար դա նման էր մաքուր օդի: Սեպտեմբերյան ողբերգական իրադարձություններից հետո տեղափոխվեցինք Երևան ու միացանք ծրագրին: Արժեքավորն ու եզակին այն է, որ ծրագիրն օգնում է ոչ միայն մեզ հաջողության հասնել, ինտեգրվել և գտնել մեր տեղը այս նոր իրականության մեջ և աշխատաշուկայում, այլ նաև նրանց, ովքեր մեզ շրջապատում են, ում հետ կիսում ենք վերապատրաստման ընթացքում ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները, դրանով իսկ ամրապնդելով մեր շրջապատը:

***«LEADERS-2-LEADERS»** ծրագիրը տեսանելի դարձրեց վաղվա օրը և առաջ շարժվելու վստահություն տվեց:*

Ինչպես ասում է Ռուբեն Վարդանյանը, ճգնաժամը միշտ և՛ սպառնալիք է, և՛ հնարավորություն: Ծրագիրը մեզ ուժ տվեց ոչ թե վախենալու, այլ հաղթահարելու սպառնալիքները և հանդիպելու նոր հնարավորությունների նոր իրականության մեջ՝ գրագիտությամբ զինված: Այս ծրագրի առաջընթացը ես կհամեմատեի սար բարձրանալու հետ, երբ ճանապարհի կեսին երկրորդ քամի է գալիս: Մնում է միայն հասնել գագաթին:

4 ՖՐԱՆՍԵՐԵՆ՝ ԱՐՑԱԽՑԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալության ու Երևանի՝ Միսաք Մանուշյանի անվան N48 հիմնական դպրոցի համագործակցությամբ 2024 թվականի մարտ-հունիս ամիսներին կազմակերպվեցին ֆրանսերենի լրացուցիչ դասեր 4-9-րդ դասարանների արցախցի այն երեխաների համար, որոնք տեղահանությունից հետո ապաստանելով Երևանում ընդունվեցին ֆրանսերենի խորացված ուսուցմամբ դպրոց: Նախագիծը պիլոտային էր, և նրա նպատակն էր՝ օգնել Արցախից բռնի տեղահանված երեխաներին՝ վերականգնել շրջափակման և տեղահանության հետևանքով բաց թողնված դասերը, յուրացնել նոր ուսումնական նյութը և հետ չմնալ դպրոցական ծրագրից:

Դասերը կազմակերպվել են երկու տարիքային խմբով՝ 3-5-րդ և 6-9-րդ դասարանում սովորող արցախցի 24 դպրոցականների համար: Դասերը վարել են դպրոցի ֆրանսերենի ուսուցիչները:

Ուսուցիչների և ծնողների վկայությամբ, ֆրանսերենի արտաժամյա պարապմունքները արդյունավետ են եղել և մեծապես օգնել են երեխաների դասապատրաստմանը:

Արցախցի երեխաների համար կազմակերպված լրացուցիչ դասընթացը նրանց նաև հարազատ միջավայրի զգացողություն է պարգևել, նպաստելով երեխաների հուզական բարեկեցությանը:

Նախագծի ընդհանուր բյուջեն կազմել է ավելի քան 1 400 ԱՄՆ դոլար: Նախագծի հաջող ընթացքը խրախուսել է շարունակել այն նաև ամռանը:

ՀԱՅՐԱՍՈՒՐԸ ՄԵՆ

Մարին ու Աշոտը Ստեփանակերտում հաճախում էին իրենց պապի՝ Արցախի հերոս Աշոտ Ղուլյանի (Բեկոր) անվան թիվ 2 դպրոցը, որտեղ ֆրանսերեն դեռ չէին անցել: Տեղահանությունից հետո ընդունվելով Միսաք Մանուշյանի անվան թիվ 48 դպրոցը, նրանք, ինչպես և դպրոցի մյուս արցախցի աշակերտները, բախվեցին ֆրանսերենի ուսուցման դժվարությունների հետ: Եռամսյա լրացուցիչ դասընթացի շնորհիվ նրանք կարճ ժամանակմիջոցում յուրացրեցին ուսումնական նյութը: Մարին հասցրել է սիրել ֆրանսերենը և մտածում է հետագայում շարունակել ուսումը ֆրանսերենի ուղղությամբ:

5 «ԿԵՆԱՑ ԾԱՌ». ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳՈՒ ՀԻՄՆՄԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԹԵՎՈՒՄ

Կարևորելով Ռուբեն Վարդանյանի նախագծերի և նրա բարեգործական առաքելության շարունակականությունը, «Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալությունը, համագործակցելով գործընկեր կազմակերպությունների հետ, Տաթևում նոր պտղատու այգի է հիմնել: Ծառատունկն ու կանաչ գոտու ստեղծումն իրականացվել է Տաթևի վանքին և «Տաթևեր» ճոպանուղուն հարակից տարածքում:

Այգին տնկվել է որպես խորհրդանիշ՝ կյանքի և նոր սկզբի, ժողովրդի ու հայրենիքի բարգավաճման գործում Ռուբեն Վարդանյանի ունեցած ավանդի, և այգու յուրաքանչյուր ծառ արտահայտում է նախագծի մասնակիցների զորակցությունը Ռուբեն Վարդանյանին և Ադրբեջանում ապօրինի պահվող մյուս հայ գերիներին:

Նոր այգում տնկվել է 1000 ծառ, այդ թվում՝ խնձորենի, տանձենի, կեռասենի և սալորենի:

Տաթևի սրտում հիմնված այս այգին բացառիկ է, քանի որ նրա հիմնմանը մասնակցել են շուրջ 300 անհատ նվիրատուներ 23 երկրներից և մեկ տասնյակից ավելի կազմակերպություններ՝ միավորելով բարին արարելու ցանկությունը և արտահայտելով մասնակիցների զորակցությունը Բաքվի բանտում ապօրինի պահվող հայ գերիներին:

Ծառատունկը մեկնարկել է և շարունակվել ամբողջ ապրիլ ամսվա ընթացքում, իսկ մայիսի 25-ին տեղի է ունեցել այգու բացման հանդիսավոր արարողությունը: Միջոցառման շրջանակում տնկվել է խորհրդանշական «Կենաց ծառը»՝ սոսին (չինար, տնջրի) որը խորհրդանշում է տոկունություն, գթասրտություն, վեհանձնություն ու երկարակեցություն և որի հետ կապված հայոց պատմության մեջ շատ ավանդություններ կան:

Այսօր, երբ մեր կազմակերպության հիմնադիր Ռուբեն Վարդանյանը Բաքվի բանտում է, ավելի քան կարևոր է նրա գործի շարունակությունն ու գաղափարների իրագործումը: Այգի հիմնելը Վարդանյանի համար միշտ եղել է բարիք ստեղծելու, նոր սկզբի խորհրդանիշ, այդ իսկ պատճառով նախաձեռնվեց այս նախագիծը:

«Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալության գլխավոր տնօրեն
Գրիգորի Մարտիրոսյան

> ***Տաթևը հայոց հոգևոր և ազգային-ազատագրական վերածննդի խորհրդանիշներից է: Այսօր շատ կարևոր է ներշնչանք և ուժ ստանալ մեր ազգային-հոգևոր ակունքներից՝ մեր նոր զարթոնքի համար: Մեր խոցված ազգային արժանապատվությունը վերականգնելու, հուսահատությունների ու հիասթափությունների կորստաբեր շղթան կոտրելու համար նաև խիստ կարևոր է Բաքվում պահվող մեր գերիների շուտափույթ և ապահով վերադարձը հայրենիք:***
>
> *Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ*
> ***Վազգեն արքեպիսկոպոս Միրզախանյան***

Մայիսի 25-ին, ի զորակցություն հայ գերիների՝ «Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալության նախաձեռնությամբ տեղի ունեցավ ուխտագնացություն դեպի Տաթևի վանական համալիր: Ուխտագնացությանը մասնակցել է ավելի քան 1000 մարդ:

Սուրբ Պողոս-Պետրոս տաճարում Վազգեն Սրբազանի հանդիսապետությամբ կատարվել է միասնական աղոթք գերիների ազատման համար:

Որպես ուխտագնացության համակազմակերպիչներ նախաձեռնությանը միացել են Հայ Առաքելական Եկեղեցին, Տաթև համայնքը, ինչպես նաև այնպիսի հեղինակավոր կազմակերպություններ, ինչպիսիք են.

- «Հայկական բարեգործական ընդհանուր միությունը»,
- «Հայ օգնության միությունը»,
- «Հ. Հովնանյան» ընտանեկան հիմնադրամը,
- «Թուֆենկյան» հիմնադրամը,
- «Ազնավուր» հիմնադրամը,
- «Օրրան» ԲՀԿ,
- «Դասավանդի՛ր, Հայաստան» կազմակերպությունը,
- «Էյ Թի Փի» ԲՀ

«Կենաց ծառ» ուխտագնացության շրջանակներում Տաթևում և Հալիձորում տեղի են ունենացել նաև ազգագրական-մշակութային մի շարք միջոցառումներ:

Արցախի «Մռակած» երգչախումբը ներկայացրել է ճանաչված երգահան Մարինե Ալեսի հեղինակային ստեղծագործությունները և Ծառլ Ազնավուրի «Քեզ համար՝ Հայաստան» երգը՝ ի նշանավորումն մեծն Ծանսոնիեյի 100-ամյակի:

Խորապես զգացված եմ՝ տեսնելով, թե որքան մեծ թվով կազմակերպություններ, անհատներ, այդ թվում նաև տեղի բնակիչներ են միացել ու աջակցել այս միջոցառումներին, «Կենաց ծառ» նախաձեռնությանը՝ իրենց գնահատանքը հայտնելով Տաթևում Ռուբենի արած մեծ գործերին: Շնորհակալ եմ Ռուբենի ընկերներին ու համախոհներին, որ շարունակում են նրա առաքելությունը և փորձում իրականություն դարձնել Ռուբենի տեսլականը:

Մարինե Ալես, *երգահան, կոմպոզիտոր, Ռուբեն Վարդանյանի քույր*

Երաժշտական կատարումներով հանդես է եկել նաև Արցախի ազգային նվագարանների նվագախումբը:

Նախագծի աջակիցների շնորհիվ «Մենք ենք մեր սարերը» հոգացել է նաև այգու ապագայի մասին՝ ստեղծվել է ոռոգման կաթիլային համակարգ, որը սնուցելու է այգին, ապագայում ապահովելով բարձր բերքատվություն: Նշանակվել է փորձառու այգեպան Արցախից բռնի տեղահավաած անձանցից:

Նախագծի իրականացման արդյունքում գոյացած գումարի մի մասն ուղղվել է Տաթևի վանքի կարիքների բավարմանը: Հանգանակված միջոցների մեծ մասն ուղղվել է Տաթևի երիտասարդության զարգացմանը. «Մենք ենք մեր սարերը» ապահովել է 12 տաթևցի տղաների և աղջիկների մասնակցությունը Դիլիջանում անցկացվող միջազգային ամառային ճամբարին, որը կազմակերպել է UWC Dilijan-ը:

Ընդհանուր առմամբ, նախագծի փաստացի բյուջեն հուլիսի 1-ի դրությամբ կազմել է մոտ 64 800 ԱՄՆ դոլար:

Մեր հաջորդ նպատակն է ընդլայնել կաթիլային ոռոգման համակարգը՝ ներառելով մոտակա այգիները, որոնք հիմնել են Ռուբենը և նրա կազմակերպությունները նախորդ տարիներին:

ՈՒՂԻՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՅԼ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հատուկ սոցիալական դեպքերում Գործակալությունը ուղղակի ֆինանսական աջակցություն է ցուցաբերել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մարդկանց՝ պրոթեզավորման կարիք ունեցող զինվորական հաշմանդամին, բազմազավակ՝ 9 երեխա ունեցող տեղահանված ընտանիքին և սոցիալական այլ խմբերի մարդկանց:

Հայոց ցեղասպանության հիշատակին նվիրված՝ ապրիլի 23-ի ջահերով երթի և ապրիլի 24-ի քայլերթի ժամանակ, ի զորակցություն Բաքվի բանտում հացադուլ հայտարարած Ռուբեն Վարդանյանին, «Մենք ենք մեր սարերը» միացել է Ադրբեջանում ապօրինաբար պահվող բոլոր բանտարկյալների ազատ արձակելու պահանջով դեպի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր երթի կազմակերպման աշխատանքներին՝ հիշեցնելով ողջ աշխարհին, որ ցեղասպանությունը շարունակվում է նաև այսօր:

«Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալության և Ֆրանսիայի «Սատար Արցախին» միության համագործակցության շրջանակներում և վերջինիս հրավերով Գործակալության ներկայացուցիչներ Նարինե Աղաբալյանը և Սոնա Հովհաննիսյանը մասնակցել են մայիսի 14-ին Ֆրանսիայի Հանրապետության Սենատում տեղի ունեցած «Համախմբում Հայաստանի համար և ի աջակցություն Լեռնային Ղարաբաղի տեղահանված ժողովրդի» խորագրով աշխատաժողովին:

Հայաստանում ապաստանած Արցախի բնակչությանը հատկացվող աջակցության համակարգման շուրջ ծավալված քննարկումներին մասնակցել են տեղահանված արցախցիներին աջակցություն ցուցաբերող ֆրանսիական դերակատար կառույցների ներկայացուցիչներ, բարձրաստիճան դիվանագիտական պաշտոնյաներ:

Վերը նշված նախագծերին ուղղված միջոցները հաշվետու ժամանակահատվածում ընդհանուր առմամբ կազմել են ավելի քան 5 400 ԱՄՆ դոլար:

Այսպիսով, 2024 թվականի առաջին կիսամյակում «Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալությունը գործընկերների հետ համատեղ իրականացրել է ավելի քան **200 000 ԱՄՆ դոլարի** նախագծեր և ծրագրեր (տես՝ աղյուսակ)։

ՆԱԽԱԳԾԵՐ	**Իրականացված նախագծերի արժեքը (ԱՄՆ դոլար)**	**Շահառուների մոտավոր թիվը**	**այդ թվում՝ ուղղակի շահառուներ**
Աջակցության նախագծեր Արցախից բռնի տեղահանվածների համար, այդ թվում.			
1. Օգնություն Արցախի վարպետներին	$ 88 752	437	87
2. «Թևեր» վերականգնողական ծրագիր՝ Արցախից բռնի տեղահանված երեխաների համար	$ 32 578	485	117
3. «Leaders-2-Leaders» շարունակական զարգացման ծրագիր	$ 22 855	135	30
4. «Կենաց ծառ». Տաթևում պտղատու այգու հիմնման բարեգործական նախաձեռնություն	$ 64 766	7 238	1 062
5. Ֆրանսերեն՝ արցախցի դպրոցականների համար	$ 1 424	108	24
Ուղղակի սոցիալական աջակցություն և այլ նախաձեռնություններ	**$ 5 405**	**20**	**12**
ԸՆԴԱՄԵՆԸ	**$ 215 780**	**8 423**	**1 332**

Ամբողջ աշխատանքն իրականացվել է բազմաթիվ երկրներից Գործակալության համախոհների (գործընկերների, դոնորների) լայն շրջանակի ֆինանսական նվիրատվությունների կամ նյութատեխնիկական օգնության տրամադրման շնորհիվ։

+374 60 700 800

info@ourmountains.am

www.ourmountains.am

ՄԵ՛ՆՔ ԵՆՔ
ՄԵՐ ՍԱՐԵՐԸ
Զարգացման
գործակալություն